

Կ. Հ. ձիագոգյան

ԷՋԵՐ ՀԱՅ ԵՎ ԲՈՒԼՂԱՐ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԴԱՐԱՎՈՐ
ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դարերի խորքից է գալիս այս երկու բախտակից ժողովուրդների ավանդական բարեկամությունը: Այն հարուստ է փոխադարձ օգնության ու համագործակցության բազմաթիվ փաստերով, հոգևոր կուլտուրայի մեջ արտահայտված շատ ընդհանրություններով:

Մեր հին պատմիչների վկայությամբ, այդ եղբայրությունն ունի ավելի քան երկու հազարամյակների պատմություն: Հին բուլղարները, կամ այսպես կոչված պրոտոբուլղարները նախապես ասլրել են Կովկասյան լեռներից դեպի հյուսիս փոփոզ Մերձավայրի տափաստաններում: Այստեղ ենթարկվելով այլ ցեղերի ավազակային արշավանքներին, նրանք հետզհետե սկսել են քոչել դեպի ավելի ապահով վայրեր: Մեր թվարկությունից առաջ երկրորդ դարում, մի քանի ցեղային խմբեր, իրենց ռազմական առաջնորդների գլխավորությամբ շարժվել են դեպի հարավ: Դրանց թվում բուլղար քոչվորները անցնելով Կովկասյան լեռնաշղթան, թափանցել են մինչև Հայկական բարձրավանդակը և բնակություն հաստատել Հայաստանի արգավանդ դաշտերում:

Մոմսես խորենացին հետաքրքիր տեղեկություններ է բերում բուլղարների այդ տեղաշարժերի մասին: Պատմելով հայոց աշխարհը բարեկարգելու և երկրի պաշտպանունակությունը հզորացնելու նպատակով Վաղարշակ թագավորի կատարած գործերի մասին. խորենացին շարադրում է հետևյալը. «...իսկ ինքը (Վաղարշակը—Վ. Ճ.) արևմուտքից հավաքած բազմությունն արձակելով՝ իջնում է Շարայի սահմանի խոտավետ տեղերը, որ հին մարդիկ կոչում էին Անփայտ կամ Վերին Բասյան, բայց հետո բուլղար Վղնդուր Վունդի գաղթականության պատճառով, որ այդ տեղերում բնակվեց, նրա անունով կոչվեց Վանանդ, և (մոռակա) գյուղերը նրա եղբայրների և սերունդների անուններով են կոչվում մինչև այժմ»:

Մի այսպիսի գաղթ տեղի է ունենում նաև Վաղարշակի որդի՝ Արշակ թագավորի օրոք: խորենացին հայտնում է, որ «...սրա ժամանակ մեծ խոտավություններ ծագեցին Կովկասյան լեռան գոտիներում, բուլղարների աշխարհում և նրանցից շատերը՝ հեռանալով եկան մեր աշխարհը և բնակվեցին Կողից ներքև արգավանդ և հացառատ տեղերում երկար ժամանակ»²:

Հայկական կենտրոնացված պետականության ու ռազմական հզորության այդ ժամանակաշրջանում, երբ հայերը հաղթական կռիվներ էին մղում հյուսիսից ներխուժող զանազան ցեղերի դեմ, բուլղարների անարգել մուտքը դեպի Հայաստանի բարեբեր վայրերը, ինքնին խոսում է բուլղար գաղթականների հանդեպ հայ ժողովրդի ցուցաբերած եղբայրական ընդունելության մասին:

1 Մ. խորենացի, Հայոց պատմություն, 1940, էջ 70:
2 Նույն տեղում, էջ 77:

Բուլղարների մասին հորենացու բերած վկայությունները դեռ շատ վաղուց աշխույժ հետաքրքրություն են առաջացրել հայ, բուլղար և օտարազգի գիտնականների մեջ: Բուլղար ժողովրդի պատմությունը շարադրելիս նրանք հաճախ են դիմել այդ աղբյուրին:

1853 թ. ռուս գիտնական Սերգեյ Ս. Ուվարովը մագիստրոսի կոչում ստանալու համար դիսերտացիա է պաշտպանում «Տարբեր ծագում ունեցող բուլղարների և նրանց հնագույն բնակավայրերի մասին» թեմայով: Այդ աշխատությունը լայն արձագանք է գտնում ինչպես գիտնականների, այնպես էլ ուսանողական շրջանակներում: Դորպատի «Դաս Ինլանդ» քաղաքային թերթում³ ուշագրավ հոդվածով հանդես է գալիս նաև Դորպատի համալսարանի պատմաբանասիրական ֆակուլտետի ուսանող Վահան Թ. Ասկարյանցը: Վերջինիս գրախոսականից պարզվում է, որ Ուվարովը «...արևելյան բուլղարների հնագույն բնակատեղերի հիշատակումների ժամանակ մի քանի տեղեկություններ է բերում նաև հայկական աղբյուրներից և առանձնապես 5-րդ դարի հայ նշանավոր պատմագիր Մովսես հորենացու աշխատությունից»: Ասկարյանցը գրում է, որ հենվելով հին Հայաստանի մի շարք պատմական մարդկանց ու քաղաքների անունների վրա, դիսերտացիայի հեղինակը փորձել է «ցույց տալու Հայաստանում բուլղարների իսկական կանգառի տեղի զուտ սլավոնական նշանակությունը և լեզվի ու ազգաբնակության վրա նրանց թողած ազդեցությունը»: Ըստ Ս. Ուվարովի հորենացու մոտ հիշատակված Երվանդ, Երվանդակերտ, Դվին և մի շարք այլ անունները Яровид, Яровидоград, Двин կամ Девин և այլ սլավոնական, տվյալ դեպքում բուլղարական անունների հայկական տառադարձություններն են: Վ. Ասկարյանցը գտնում է, որ ոչ մի հիմք չկա կասկածելու հորենացու բերած տեղեկությունների ճշմարտացիության վրա, քանի որ դրանք քաղված են ստույգ և իրար համընկնող աղբյուրներից, սակայն Ուվարովի ենթադրությունները, որոնք «հիմնված են միայն հայկական և բուլղարական տեղի ու անձի անունների բաղաձայն հնչյունների նմանության վրա», համարում է գիտականորեն չհիմնավորված: Ասկարյանցի կարծիքով Հայաստանում հաստատված բուլղարներից որպես հուշարձան մնացել է միայն Վանդ կամ Վանանդ տեղանունը, որը իսկապես սլավոնական Վենդեր, Վենդեն, Վինդեն ընդհանուր անվանումներից որևէ մեկի հայկական տառադարձությունն է, և որ հետագայում այդ բուլղարները ձուլվել են հայ ժողովրդի մեջ:

Հին բուլղարների մասին մեր պատմահոր բերած տեղեկությունները այսօր էլ դեռ չեն դադարել հետաքրքրության և ուսումնասիրության առարկա լինելուց:

7-րդ դարի կեսերին բուլղարական մի մեծ «դրուժինա» իսան Ասպարուխի առաջնորդությամբ, Աղովի ափերից շարժվում է դեպի արևմուտք: Հասնելով Դանուբի ներքին հոսանքը, բուլղարները անցնում են լայնահուն գետը և բյուզանդական սահմանապահ զորքերի հետ երկար ու համառ կռիվներից հետո հաստատվում Հեմուս լեռան հյուսիսային լանջերին, մինչև Սև ծովի ափերը: Այստեղ շուրջ 679 թ. կազմակերպվում է առաջին բուլղարական թագավորությունը⁴, որի իշխանությունը հետզհետե տարածվում է Բալկանյան թերակղզու մեծ մասի վրա: Չուլվելով նախապես այս տերիտորիաներում ապրող սլավոն-

³ „Das Inland“, Dorpat, 1853, № 52, 1854, № 5, 3. 5.

⁴ «История Болгарии», т. 1, АН СССР, Москва, 1954, с. 59.

նական ցեղերի մեջ, բուլղարները շուտով յուրացնում են նրանց ավելի բարձր կուլտուրան, հզորանում և Բալկաններում դառնում Բյուզանդիայի աշխարհակալական ձգտումները չափավորող ամենալուրջ ուժերից մեկը:

Այդ ժամանակներից, ահա, բուլղար ժողովրդի ամբողջ պատմությունը սոցիալական ու քաղաքական ազատության համար մղվող պայքարի պատմությունն է:

8-րդ դարից Բյուզանդիան էլ ավելի է ուժեղացնում ասիմիլյատորական քաղաքականությունը հայերի և բուլղարների նկատմամբ: Այս երկու «անհանդիստ» ժողովուրդների ռազմական ու քաղաքական հզորությունը կազմալուծելու և ապա իրենց ենթարկելու նպատակով բյուզանդական կայսրները սիստեմատիկ կերպով կազմակերպում են գաղթեր ու բռնագաղթեր՝ Բալկաններից դեպի Փոքր Ասիա և Հայաստան, իսկ այստեղից դեպի Բալկանները: Սրանց պիտի ավելացնել նաև այն «կամավոր» տեղաշարժերը, որոնք տեղի են ունեցել երկու երկրների վրա Բյուզանդիայի քաղաքական ճնշման հետևանքով:

8-րդ դարի կեսերին Բուլղարիայում բռնկված քաղաքացիական կռիվների արդյունքը լինում է այն, որ ավելի քան երկու հարյուր հազար բուլղար և սլավոն գյուղացիներ տեղափոխվում են Փոքր Ասիա⁵:

Բուլղարիայում, բյուզանդական գերիշխանության ժամանակաշրջանում (1018—1185), բուլղար իշխանավորներից ոմանք իրենց զորքերի հետ միասին, ծառայության էին մտնում բյուզանդական բանակում: Վերջիններս, սակայն, ապահովության համար այդ զորքերին ուղարկում էին Բուլղարիայից հեռու՝ կայսրության արևելյան սահմանները, մասնավորապես պատմական Հայաստանի տարբեր շրջանները⁶:

11-րդ դարի պատմիչ Արիստակես Լաստիվերտցին հայտնում է, որ Հայաստանում՝ բյուզանդական բանակում հայկական և հունական զորքերի հետ միասին իրենց ռազմական հրամանատարների գլխավորությամբ սելջուկ-թուրքերի դեմ կռվում էին նաև բուլղարները: Լաստիվերտցին հիշատակում է նրանց զորավարներից մեկի անունը. «Ահարոն՝ որդի Բուլղարին, որ ուներ զկողմն Վասպուրականի»⁷:

Ահարոնը Բյուզանդիայի գերիշխանության տակ ընկած բուլղարական վերջին ցար Իվան Վլադիսլավի (1015—1018) երրորդ որդին էր: Բյուզանդական կայսրի հրամանով Ահարոնը նշանակվում է նախ Վասպուրականի «Վեստ» կամ «Կատեպան», ապա Անիի մագիստրոս, իսկ հետագայում Միջադեպի մագիստրոս Գրիգոր Պահլավունու մահից հետո (1058) նրա փոխանորդը⁸: Հայաստանում իր երկարամյա ծառայության ընթացքում Ահարոնը աչքի է ընկել ոչ միայն Հայաստան ներխուժող սելջուկների դեմ մղած համառ մարտերով, այլև իր կառավարչության տակ գտնվող հայկական քաղաքների ու նրանց բնակիչների նկատմամբ, ինչպես Ն. Յ. Մառն է նկատել «հաճոյակատար-հոգատար» վերաբերմունքով:

Այս տեսակետից հետաքրքիր է Անիի մայր տաճարի արևմտյան պատի

5 «История Болгарии», т. 1, АН СССР, Москва, 1954, с. 63.

6 Նույն տեղում, էջ 111:

7 «Պատմութիւն Արիստակէայ Լաստիվերտցոյ», Վենետիկ, 1844, էջ 58:

8 В. Н. Златарски, История на българската държава през средните векове, т. 2, София, 1934, с. 535.

վրա Ահարոնի թողած հայերեն արձանագրությունը (1055—1056 թթ.): Բերենք մի հատված այդ պատմական հուշարձանից.

«...Ես Առանս մագիստրոս մեծարեալ ի մեծափառ թագավորութեանցն ի գեղ զարգու եւ ի տիս մանգութեան իմո եկի յԱրեւելս ի գեղեցկաշէն բերդս յԱնի բարձրացուցի բաւանդակ զպարիսպ սորին կառկառակոյտ արձանաւր եւ հաստահեղոյս ամրութեամբ. եւ ի յիմոց մեծածախ գանձուց ածի ջանին ջուր յորդարուիս ի մէջ ամրոցիս յուրախութիւն եւ ի զովացումն ծարաւեաց...»⁹: Այնուհետեւ, արձանագրության մեջ ասվում է, որ ընդառաջելով անեցիների խնդրանքին վերացվում են ամեն տարի նրանցից գանձվող ա՛յս-ա՛յս հարկերը:

Ահարոնի որդի Թեոդորոսի կարճատեւ, բայց հիշարժան կյանքը նույնպէս անշլվում է հայ ժողովրդի մի հատվածի բախտին: Թեոդորոսը դեռևս երիտասարդ տարիքում նշանակվում է Տարոն դավառի կառավարիչ: Այստեղ, սակայն, Հայաստանը ասպատակող սելջուկ-թուրքական զորքերի դեմ մղած կատաղի ճակատամարտերից մեկում Թեոդորոսը ընկնում է հերոսի մահով: Այս դեպքերին ժամանակակից Լաստիվերտցին ջերմ խոսքերով է հիշատակում «մանուկ հասակաւ եւ գեղեցկաշուք կերպարանօք» և «քաջութեամբ առաւել քան զբազումս» այդ ջահել զորականի «յոյժ ապաշաւանաց արժանի» ողբերգական վախճանը¹⁰:

Ուշագրավ է, որ Իվան Վլադիսլավի տոհմի անդամներից մեծ մասը, ինչպէս որդիներից՝ Ալուսիանն ու Ահարոնը, թոռներից՝ Վասիլին, Սամուելը, Թեոդորոսը և ուրիշներ, իրենց «յուրախիններով» երկար տարիներ ապրել ու ծառայել են Հայաստանի տարբեր վայրերում, իսկ նրանցից ոմանք նույնիսկ ազգակցական կապերի մեջ մտել տեղացի հայ «երևելի» ընտանիքների հետ¹¹:

Բուլղարների մասնակի գաղթը դեպի պատմական Հայաստան շարունակվել է նաև հետագա դարերում: Մինչև 19-րդ դարի վերջերը Կիլիկիայի հյուսիսային շրջաններում, մասնավորապէս Տավրոսյան լեռների հարավ-արևմտյան գոտիներում պահպանված բուլղարական տեղանունները, ինչպէս «Բուլղար դաղը», «Բուլղար գոյոյ», «Բուլղար մաղեն», «Բուլղար մաղարա» և այլն, անվիճելի ապացույց են այն իրողության, որ հայկական այս վայրերում դեռ շատ վաղուց գոյություն են ունեցել բուլղարական գաղութներ: Հայ անվանի բանաստեղծ և գիտնական Ղևոնդ Ալիշանը իր նշանավոր «Սիսուանը» գրելիս հետաքրքրվել է բուլղարական այս տեղանունների ծագումնաբանությամբ, և գտել, որ այդ բնակավայրերը կոչվում են այդպէս «յանուն բուլղարաց այսր վտարելոց ի երկրէ իւրեանց, ի ձեռն կայսերաց Բիւլանդիոյ»¹²:

Հայ ժողովրդի առանձին հատվածների, իսկ հետագայում նաև մասսայական բնագաղթը դեպի Բալկանները սկսվել է շատ հին ժամանակներից, երբ բուլղարները դեռևս չէին հաստատվել այդ թերակղզում: 7-րդ դարի պատմիչ Սեբեոսի մոտ հանդիպում ենք հետաքրքիր տեղեկությունների: Բյուզանդիայի Մավրիկիոս կայսրը (582—602) իր լայնածավալ պետության արևելյան սահմանները ապահովելու համար ծրագրում է Հայաստանի հունական մասի հայ-

⁹ В. Н. Бенешевич, Три анийские надписи XI века, Петроград, 1921.

¹⁰ «Պատմութիւն Արիստակեսայ Լաստիվերտցոյոյ», Վենետիկ, 1844, էջ 73:

¹¹ В. Н. Златарскн, История на българската държава..., т. 2, София, 1934, с. 62, 535.

¹² Ղ. Ալիշան, Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 3.

կական զորքերին տեղափոխել Թրակիա: Այսպիսով Մավրիկիոսը ձգտում էր ջլատել անկախության ձգտող հայերի ռազմական ուժերը: Իր այս մտազրու-
թյունը հատուկ նամակով հայտնում է պարսից նոսրով արքային, և խորհուրդ
տալիս նրան, որ ինքը ևս այդպես վարվի: «Ազգ մի խոտորեւ անհնազանդ...
կան ի միջի մերում և պղտորեն,— գրում է Մավրիկիոսը նոսրովին,— բայց
եկ՝ ես զիմս ժողովեմ եւ ի Թրակէ գումարեմ. եւ դու զքոյդ ժողովէ եւ հրամայէ
յԱրեւելս տանել: Զի եթէ մեռանին թշնամիք մեռանին. եւ եթէ սպանանեն՝
զթշնամիս սպանանեն. եւ մեր կեցցուք խաղաղութեամբ: Զի եթէ դոքա յերկրի
իւրեանց լինիցին, մեզ հանգչել ոչ լինի»¹³:

Շուտով, կայսրի հրամանով, մեծ թվով հայեր բռնադաշտվում են Թրա-
կիա: Ինչպես պարզվում է Սեբեոսի հետագա շարադրանքից, Բալկանների
բյուզանդական բանակում միշտ էլ բռնի կերպով ծառայել են տասնյակ հա-
զարների հասնող հայկական զորաբաժիններ, որոնց հայրենիք վերադառնա-
լու երազանքը միշտ էլ խափանվել է Մավրիկիոսի¹⁴ և նրա հետնորդների կող-
մից:

Հետագայում, բյուզանդական կայսրների համար սովորական բան է
դառնում հյուսիսից ներխուժող ցեղերի դեմ, երկիրը պաշտպանելու համար,
հայկական զորքերի տեղափոխումը դեպի Բալկաններ:

Հայերի մասսայական բռնագաղթը խոշոր շափերի է հասնում հատկապես
8-րդ դարի կեսերից, երբ Հայաստանում սկսում են ծավալվել աղանդավորա-
կան շարժումները: Այսպես, 752 թ. Կոնստանտին 5-րդ կայսրը Թեոդոսիուպո-
լիսն (Կարինը — Վ. Ճ.) ու Մելիտինեն արաբներից գրավելուց հետո, այստեղ
ապրող հայ և ասորի աղանդավորներին տեղափոխում է Թրակիա, մասնավոր-
ապես Ֆիլիպպուպոլիս (այժմ Պլովդիվ — Վ. Ճ.) քաղաքի շրջակայքում, ուր
ռազմական ծառայությունների հետ զուգընթաց նրանց տալիս է բնակարան-
ներ ու հողաբաժիններ¹⁵:

Իններորդ դարի երկրորդ կեսերին, Հայաստանում Պավլիկյան շարժումը
դաժան կերպով ճնշվելուց հետո (873), ապստամբների մի մասը ցրվում է
դանազան կողմերը, իսկ մեծ մասը կամ սրի է քաշվում, կամ թե կայսրի հրա-
մանով գաղթեցվում Բուլղարիա: Այստեղ հաստատված հայ պավլիկյանների
թիվը հասնում է մի քանի տասնյակ հազարի¹⁶:

Պավլիկյաններից հետո Հայաստանում աշխարհիկ ու հոգևոր ֆեոդալների
դեմ մղված սոցիալական պայքարը նրկար ժամանակ տանում են թոնդրա-
կեցիները, որոնց ռազմունակությունը լուրջ վտանգ էր Բյուզանդիայի արևելյան
սահմանների համար: Արաբների հետ նրանց հավանական դաշնակցությունը
կարող էր ծանր հետևանքներ ունենալ կայսրության համար: 12-րդ դարի հուլյն
կին պատմիչ Աննա Կոմնենը գրում է, որ հայ աղանդավորները «բիրտ են ու
վտանգներից չվախեցող», որ Հովհաննես Չմշկիկ կայսրը նրանց հաղթելուց
հետո (970 թ.) բոլորին գերեվարեց Թրակիա և ստիպեց բնակվեն Ֆիլիպպու-
պոլիսի շրջակայքում¹⁷:

13 «Պատմություն Սեբեոս եպիսկոպոսի ի Հերակլն», Թիֆլիս, 1913, էջ 75:

14 Նույն տեղում, էջ 86:

15 Հ. Բ. Բարթիկյան, Պավլիկյանների առասպելական ծագումը... Հայկական ՍՍՏ
ԳԱ «Տեղեկագիր», 1957, № 1, էջ 86:

16 «Հայ ժողովրդի պատմություն», 1 մաս, Երևան, 1958, էջ 177:

17 Տե՛ս Հ. Բ. Բարթիկյան, Պավլիկյանների առասպելական ծագումը... Հայկական ՍՍՏ
ԳԱ «Տեղեկագիր», 1957, № 1, էջ 83:

Չնայած այս պարտութեանը, հետագայում էլ, ավելի քան ութ տասնամյակ, թոնդրակեցիները շարունակեցին զլխավորել գյուղացիական շարժումները Հայաստանում: 1051—1052 թթ. բյուզանդացիների ռազմական օժանդակութեամբ Գրիգոր Մագիստրոսը վերջնականապես ջախջախեց ապստամբներին: Հունական զորքերը քարուքանդ արեցին նրանց գյուղերն ու ավանները, իսկ բնակիչներին քշեցին Բալկանյան թերակղզի, բնակեցնելով զլխավորապես Թրակիայում և կայսրութեան հյուսիսային սահմաններում:

Այսպիսով, միջին դարերում Բուլղարիայի տարբեր շրջաններում ապրող հայերի թիվն այնքան է բազմանում, որ ժամանակակից պատմիչների վկայութեամբ, երկրում ծավալվող սոցիալ-քաղաքական իրադրությունների ոլորտում բուլղար բնակչութեան հետ միասին հաճախ հանդես են գալիս նաև հայերը: Աննա Կոմնենը գրում է. «Այդ քաղաքի վրա (Ֆիլիպպուպոլսի — Կ. Ճ.) համատեղ տիրութուն էին անում հայերը և այսպես կոչված բոգոմիլները, ինչպես նաև անաստված պավլիկյանները...»:

Խաչակրաց երրորդ արշավանքի ժամանակ (1189), երբ գերմանական ասպետները Ֆիլիպպուպոլսի շրջակայքում սկսեցին դրադվել թալանով ու կողոպուտով, Անսբերտի վկայութեամբ, բողոքի և խնդրանքի համար Ֆրիդրիխ I Բարբարոս «կայսրի ու նրա զորականների մոտ եկան հայերը և բուլղարներից ոմանք, որոնք բնակեցնում էին այդ երկրի մի մասը...»¹⁸:

Դարեր շարունակ երկու ժողովուրդների միմյանց երկիր տեղափոխելը, բնական է, ի վերջո տալու էր իր դրական արդյունքները: Շփման մեջ մտնելով իրար հետ, ծանոթանալով միմյանց բարքերին ու սովորություններին, հետզհետե կոփվում էր հայերի և բուլղարների անխախտ բարեկամությունը: Կայսրութեան սահմանակից ժողովուրդներին իրար հետ թշնամացնելու բյուզանդական նենգ քաղաքականությունը, որը ի դեպ մեծ վնասներ է հասցրել այդ ժողովուրդների բարի դրացիական փոխհարաբերություններին, հաճախ ստիպված էր արձանագրել նաև այնպիսի փաստեր, որոնք հաստատում էին ընդհանուր թշնամու դեմ միասնական ճակատով հանդես գալու նրանց մտադրությունը:

10-րդ դարից սկսած հաճախակի են դառնում դեպքեր, երբ բուլղարների դեմ կռվելու համար Թրակիա կամ Մակեդոնիա փոխադրված հայ ազատամիտները, հարմար առիթ որսալով, իրենց զորքերի հետ միասին անցել են բուլղարների կողմը և իրենց ռազմական ունակությունները ի սպաս դրել մեզ բախտակից ժողովրդի ազատագրական պայքարին: Այս տեսակետից ուշագրավ են 10-րդ դարի պատմիչ Ստեփանոս Տարոնեցու բերած վկայությունները: Բյուզանդիայի Վասիլ Բ. Բուլղարասպան կայսրի (976—1025) այս ժամանակակիցի «Պատմութիւն տիեզերական» աշխատութեան մեջ կարդում ենք հետևյալը. «Զի էին նոքա երկու եղբարք, որ կոմսաձագքն կոչէին, անուն երիցուն Սամուէլ յազգէս հայոց, ի գաւառէն Դերջանայ, զոր ընդ գունդս սաղարացն տարեալ էր գնոսա թագաւորն Վասիլ ի Մակեդոնիտ պատերազմել ընդ բուլղարացն, որոց ի դիպող ժամու ապստամբեալ ի թագաւորէն Յունաց՝ գնացին առ թագաւորն բուլղարաց, որ էր կուրտ, և ըստ քաջութեան իրեանց մեծացան յաչս նո-

¹⁸ Ցիտատներն ըստ В. Н. Златарски и, История на българската държава..., т. 3, София, 1940, с. 26, 27.

րա»¹⁹: Այնուհետև Տարոնեցիին պատմում է, որ Սամուելն ու իր եղբայրը երկար տարիներ գլխավորեցին բուլղարների հերոսական պայքարը բյուզանդացիների դեմ, և «...ընդդէմ կացին խիստ մարտիւք թագաւորին Յունաց»²⁰:

Մի շարք պատմարաններ (Յ. Իվանով, Գ. Քացարով, Ն. Ադոնց և ուրիշներ) գտնում են, որ Ասողիկի հիշած Սամուէլը, նույն ինքը բուլղարների Սամուիլ թագավորն է (997—1014):

Բուլղար թագավորներից Կրումը (803—814), Կալոյանը (1197—1207), Իվան Ասենը (1218—1241) և ուրիշներ, մեծ հմտությամբ օգտագործել են հայ պավլիկյանների և բուլղար աղանգավորների հակաբյուզանդական տրամադրությունները, «հանդուրժող» քաղաքականություն են վարել նրանց նկատմամբ և նրանց ռազմական ուժերի ակտիվ օժանդակությամբ փայլուն հաղթանակներ տարել երկիրը ներխուժած բյուզանդական և լատինական զորքերի դեմ²¹:

Այս շրջանում հայ և բուլղար ժողովուրդների փոխհարաբերությունները շեն սահմանափակվում միայն մերձեցման ու ռազմական համագործակցության նման փաստերով: Դարեր շարունակ երկու ժողովուրդներն էլ ապրել ու ստեղծագործել են պատմական գրեթե միանման պայմաններում: Միևնույն կացութաձևը, բնական է, մարդկանց մեջ խմորելու էր համանման մտածողություն, ծնունդ էր տալու միմյանց համահնչուն իդեոլոգիաների ու ձգտումների: Ինչպես Հայաստանում, այնպես էլ միջնադարյան Բուլղարիայում իշխում էին ցարերն ու բոլյարները, բարձրաստիճան հոգևորականությունն ու զինվորական ազգանին: Ֆեոդալական պետության այս վերնախավը իր ձեռքումն էր պահում ամբողջ երկրի արգավանդ հողերն ու բնական հարստությունները: Մանր հարկերն ու անվճար ծառայությունները, ինչպես նաև պատերազմների ամբողջ դժվարությունները ընկած էին գյուղացիության և քաղաքի չքավորության ուսերին: Տիրող կամայականության ու անխնա շահագործման դեմ աշխատավորական մասսաների սոցիալական բողոքը հանդես է գալիս կրոնական քողի տակ: Բուլղարիայում սկիզբ են առնում աղանդավորական շարժումները: Ֆեոդալական կարգերից դժգոհ տարրերը կազմակերպում են «եղբայրություններ», որոնց մեջ հավաքագրված աղանդավորները, այսպես կոչված բոգոմիլները, ժողովրդի մեջ տարածում են իրենց սոցիալ-դավանաբանական ըմբռնումները: Գոյություն ունեցող ֆեոդալական փոխհարաբերությունների տեղ, բոգոմիլները առաջադրում են «քրիստոնեական առաջին համայնքները, որոնք կազմակերպված էին ընդհանուր սեփականության և մարդկանց միջև հավասարության սկզբունքներով»²²:

Պաշտոնական եկեղեցու ներկայացուցիչների նախաձեռնությամբ բոգոմիլների քարոզած «հերետիկոս» ուսմունքի դեմ ստեղծվում է հսկայական գրականություն: 10-րդ դարի բուլղար գրող Պրեսվիտեր Կոզման, բնական է, իշխող վերնախավերի դիրքերից, բոգոմիլներին մեղադրում էր այն բանի համար, որ «նրանք հայհոյում են հարուստներին, յուրայիններին սովորեցնում

¹⁹ Ս տ. Տ ա ռ ո ն ե ս ց ի, «Ասողիկ», Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 244:

²⁰ Նույն տեղում, էջ 246:

²¹ «История Болгарии», т. I, АН СССР, Москва, 1954:

²² Н. Попова, Й. Митев, Светли страници от историята на българския народ, София, 1955, с. 29.

են շենթարկվել իրենց տերերին, արհամարհում են թագավորին, պարսավում մեծամեծներին, նախատում բույարներին և կարծում են, թե աստծուն ատելի են նրանք, ովքեր աշխատում են թագավորին և հրամայում են ծառաներին շաշխատել իրենց տերերի համար»²³:

Նշենք, որ նույն, կամ գրեթե նույն ոգով են գրված Հայաստանի պավլիկյան և թոնգրակյան աղանգավորներին պարսավող Գրիգոր Նարեկացու, Հովհան Օձնեցու, Արիստակես Լաստիվերտցու, Գրիգոր Մապիստրոսի և այլոց թրղթերն ու վկայությունները:

Բոգոմիլությունը պավլիկյան ուսմունքի մի այլ տարատեսակն էր, և ինչ-քանով որ սնվում էր սոցիալական միևնույն արմատներից, իր բովանդակությամբ ու նպատակներով հոգեհարազատ էր հայ աղանգավորական շարժումներին: Երկու ժողովուրդների հոգևոր կուլտուրայի մեջ արտահայտված այս ընդհանրությունը առիթ է տվել հետաքրքիր մեկնաբանությունների: Ոչ միայն հայ, այլև բուլղար պատմաբաններն ու բանասերները հանգել են այն ճիշտ եզրակացության. որ պավլիկյան աղանգը, որքանով որ ուղղված էր նաև Բյուզանդիայի դեմ, լայն արձագանք է գտել Բուլղարիայում և մեծապես նպաստել է բուլղար ժողովրդի մեջ պավլիկյան ու բոգոմիլյան հայացքների տարածմանը:

Բուլղար անվանի գրականագետ Բոյան Պենևը, հենվելով հավանաբար 8-րդ դարի վերջերի հույն քրոնիկագիրներ Թեոփանեսի և Նիկիփորի տվյալների վրա, գրում է, որ Բուլղարիայում «աղանգների առաջին քարոզիչները եղել են սլավոն բնակչության մեջ ցրված հայ և ասորի գաղթականները»²⁴, իսկ բոգոմիլյան գրականության հայտնի մասնագետ պրոֆ. Յորդան Իվանովը վկայում է, որ Թրակիայում և հատկապես Ֆիլիպպուպոլսի շրջակայքում հաստատված հայ և ասորի աղանգավորները «հեշտացրել են Բուլղարիայում բոգոմիլության սկզբնավորումը»²⁵: Ավելին. պատմաբան Դիմիտր Անգելովի կարծիքով «պավլիկյան և մեսալյան հայացքների ազդեցությունը իր արտահայտությունն է գտել բոգոմիլյան ուսմունքի բոլոր կողմերի, նրա կրոնա-փիլիսոփայական և աստվածաբանական սիստեմի բոլոր մանրամասների մեջ»²⁶:

Միջնադարի հայ և բուլղարական վերոհիշյալ շարժումների գաղափարական մոտիկությունը բացահայտվում է նաև նրանով, որ Բուլղարիայում պաշտոնական եկեղեցու դոգմաների դեմ մղված սոցիալ-դավանարանական պայքարում բուլղար աղանգավորների ամենահուսալի համախոհներն ու ղինակիցները եղել են հայ պավլիկյանները:

Այսպիսի սերտ համագործակցության մի հետաքրքիր փաստի մասին է խոսում 9-րդ դարի հույն գրող ու դիվանագետ Պետրոս Սիկիլիացին: Բուլղարիայի հոգևոր առաջնորդին ուղարկած իր պարսավագրում (869) Սիկիլիացին ոչ միայն նշավակում է Հայաստանի պավլիկյաններին, այլև նախազգուշացնում է արքեպիսկոպոսին, որ երբ ինքը ռազմագերիների փոխանակման գործով գտնվում էր Տեվրիկում, այնտեղ տեղեկացել էր, որ ապստամբած պավլիկյանները մտադիր են Բուլղարիա գործուղել իրենց մարդկանց,

23 П. Динеков и др., Христоматия по старобългарска литература, София, 1961, с. 165.

24 Б. Пенев, Българска литература, София, 1946, с. 58.

25 Я. Иванов, Богомилски книги и легенди, София, 1925, с. 10.

26 Д. Ангелов, Богомилство в Болгарии, Москва, 1954, с. 54.

ուղղափառներին դարձի բերելու և այդպիսիներին դեպի իրենց աղանդը հրապուրելու համար²⁷: Պարզ է, որ այս հանդուգն ծրագրի իրագործման համար, Հայաստանի պավլիկյանները հենվում էին Բուլղարիայում գործող հայ և բուլղար աղանդավորների օժանդակության վրա:

Բուլղարական հին գրական հուշարձաններից մեկում՝ 12-րդ դարի եկեղեցական գործիչ Իլարիոն Մրզլենացուն նվիրված «վարքում» Եվտիմիյ Տրրնովացին պատմում է, որ «Քիչ ժամանակ անց, երբ սուրբը սովորեցնում ու համոզում էր հավատարիմներին, իմացավ, որ (հոտի) մեծ մասը մանիքեցիներ, հայեր են, նույնպես և բողոմիլիներ, որոնք նախատում էին նրան, խարդավում նրա դեմ, ձգտելով խավարի մեջ խոցել ուղղափառների սիրտը... նրանք սիրում էին վիճել ու բանակովել նրա հետ»²⁸:

Միջին դարերում Բուլղարիայում «арменец» («հայ») անունը, բացի իր էթնիկական իմաստից, ընդհանրական էր դարձել հերետիկոսների, մասնավորապես պավլիկյանների համար²⁹, մի հանգամանք, որ կրկին անգամ վկայում է Բուլղարիայում պավլիկյանությունը հայերի կողմից տարածված լինելու մասին:

Բուլղարիայում գոյության իրավունք ձեռք բերելուց հետո, բողոմիլությունը թափանցում է ոչ միայն արևմուտք, այլև դեպի արևելք, Փոքր Ասիայի գյուղական վայրերը³⁰: Բնավ բացառված չէ, որ Հայաստանում աղանդավորական շարժումների ջախջախումից հետո, բողոմիլությունը կարող էր ձնշված հաջաշխատավոր գյուղացիության մեջ ևս ունենալ իր համակրողներն ու հետևորդները: Հայաստանի հարավում կային այլ աղանդներ ևս, որոնք նույնպես համահնչյուն էին բողոմիլությանը: Մեր միջնադարյան պոեզիայի խոշոր ներկայացուցիչ և պաշտոնական եկեղեցու դոգմաների ջերմ պաշտպան Ներսես Շնորհալին իր «...յաղագս Արևորդացն դարձի» թղթում ընդհանուր շատ կողմեր է գտնում այդ երկու աղանդների միջև, այդ իսկ պատճառով էլ խիստ քրննադատության է ենթարկում նաև բողոմիլներին. «Զի որպէս ազգն Հոռոմագ Պողոմեղոսք անուանեալք մնադին խաւարեալք ի լուսոյ աւետարանին փառացի Քրիստոսի, և թագնաբար ունենալով ի սիրտս զաղանդն սատանայի ոչ հնաւանդեցան առաքելոցն քարոզութեանց, այսպէս և Արևորդիքդ յազգս մեր, ի մասին սատանայական խաւարին մնացեալք, ոչ կամեցան լուսաւորիլ աստուածային լուսովն ի ձեռն լուսավորչին մերոյ սրբոյն Գրիգորի, այլ սիրեցին զխաւար և ոչ զլոյս մինչև ցայսօր ժամանակի»³¹:

Հայ և բուլղար եկեղեցական ու հասարակական գործիչների այսպիսի համատեղ պայքարը պավլիկյան և բողոմիլյան ուսմունքների դեմ, ինքնին հաստատում է այդ աղանդների գաղափարական ու սոցիալ-քաղաքական արմատների ընդհանրությունը:

Միջին դարերում հայ ժողովրդի պիր ու գրականության համբավը տարած-

27 P. M. Бартияян, Источники для изучения истории павликианского движения, Ереван, 1960, с. 118.

28 П. Динев и др., Христоматия по старобългарска литература, София, 1961, с. 359.

29 Նույն տեղում, էջ 365:

30 «Кратка история на България», БАН, София, 1958, с. 45.

31 Ներսես Շնորհալոյ Հայոց կաթողիկոսի նամականի», Վենետիկ, 1838, էջ 239:

վել էր հայրենի բնաշխարհից դուրս: Նրա մասին գիտեին և մեծ հարգանքով էին վերաբերվում նաև բուլղարական առաջին լուսավորիչներ Կոնստանտին Կիրիլն (827—869) ու Մեթոդին (մեռել է—885): Այն ժամանակ բազմաթիվ հայ, ռուս, բուլղար, սերբ և այլ ազգությունների ուսումնատենչ երիտասարդներ իմաստնանալու համար մեկնում էին մեծ հռչակ վայելող բյուզանդական կուլտուրայի կենտրոններ՝ Կոստանդնուպոլիս, Ալեքսանդրիա, Աթոն և այլ վայրեր: Այստեղ նրանք ծանոթանում էին միմյանց հետ, հաղորդակից դառնում միմյանց ազգային մշակույթներին:

Բյուզանդիայում են սովորել նաև սլավոնական գրերի ստեղծողներ Կոնստանտին Կիրիլ ու Մեթոդի եղբայրները: Մեթոդին երկար տարիներ սովորել ու ապրել է փոքրասիական Պոլիխսոնի վանքում, իսկ Կիրիլը դաստիարակվել է Կոստանդնուպոլսի Մագնավրա բարձրագույն ուսումնարանում, և դարձել իր ժամանակի ամենակրթված մարդկանցից մեկը: Այստեղ նրան դասավանդել են նաև հայազգի գիտնականներ՝ փիլիսոփա-աստվածաբան՝ Փոտոբոսը³² և հայտնի ֆիզիկոս-մաթեմատիկոս Լեոնը³³: Շատ հավանական է, որ Կոստանդնուպոլսում սովորելիս և ապա նաև Փոքր Ասիայում սարակինոսների մեջ քրիստոնեություն տարածելիս, երկու եղբայրները շփման մեջ են մտել հայերի հետ, ծանոթացել մեր ժողովրդի դարավոր կուլտուրայի և հատկապես նրա գրավոր մշակույթի հետ:

Մեր այս ենթադրության համար համոզիչ վկայություն է տալիս վարքագիր Թեոֆիլակտը: Մորավիայում նոր ստեղծված սլավոնական գրերն ու գրականությունը տարածելիս (863), լուսավորիչ եղբայրները հանդիպեցին գերմանական պապականների կատաղի դիմադրությանը: Վերջիններս պնդում էին, որ Քրիստոսի ուսմունքը կարելի է քարոզել միայն երեք «սրբազան» լեզուներով, այն է եբրայերեն, լատիներեն և հունարեն: Կաթոլիկների այն հերյուրանքներին, թե սլավոներենը «բարբարոս» լեզու է, և որ նրանով քրիստոնեություն տարածելը հերետիկոսություն է, Կիրիլը անվրդով պատասխանեց. «Եվ ինչպես չեք ամաչում ճանաչել միայն երեք լեզու, լուսության ու խավարի մատնելով մյուս ժողովուրդներին...: Մենք գիտենք շատ ժողովուրդներ, որոնք ունեն իրենց գրքերը և աստծուն փառաբանում են իրենց լեզվով: Այդպիսիք են հայերը, պարսիկները, արաբները, վրացիները, գոթերը, եգիպտացիները և շատ ուրիշներ: Եթե ես խոսեմ ձեզ համար անհասկանալի լեզվով, դրանից ձեզ ի՞նչ օգուտ»³⁴:

Արևմուտքի միջնադարյան սխոլաստիկայի այդ խավար ժամանակաշրջանում հայ և արևելյան ժողովուրդների լեզուների ու գրականության պաշտպանության այս պերճախոս փաստը, ինքնին վկայում է բուլղար լուսավորիչների լայն աշխարհայացքի և այլ ազգերի մշակույթի նկատմամբ նրանց ունեցած խոր ակնածանքի մասին:

Սլավոնական նշանագրերի ստեղծումը (855—863) մի ամբողջ հեղաշրջում առաջացրեց սլավոն ժողովուրդների կուլտուրական կյանքում: Նրանով գրված ինքնուրույն ու թարգմանական գրականությունը շուտով լայն տարածում գտավ նախ Բուլղարիայում, ապա նաև Կիևյան Ռուսիայում, Մորավիա-

³² В. Тотомянц, Ролята на арменците в цивилизацията на народите, София, 1936, с. 41.

³³ Բնագիտության և տեխնիկայի պատմությունից, Երևան, 1960, էջ 10:

³⁴ К. Генон и др., Литература, София, 1958, с. 78.

յում, Ուկրաինայում, Չեխիայում: Սլավոնական նոր գրչությունը մեծապես նպաստեց բուլղարական և վերոհիշյալ երկրների պետականության ամրապնդմանը, նրանց ազգային մշակույթի սկզբնավորմանը:

Ինչպես հայկական, այնպես էլ բուլղարական միջնադարյան գրականության մեջ գերիշխողը կրոնական մտայնությունն էր: Ժողովրդական զանգվածները, սակայն, քիչ բան էին հասկանում պաշտոնական գրականության ու եկեղեցական գրքերի «չոր ու փքուն» ոճից: Ցուրին ու բուլյարներին, աստծուն ու սրբերին փառաբանող այդ երկերը ճնշված մարդկանց սրտովը չէին. նրանք փնտրում ու կարգում էին առավել աշխարհիկ բովանդակությամբ ու մատչելի լեզվով գրված ստեղծագործություններ: Քրոնիկների, վիպակների, պատմահերոսական ու բարոյախոսական լեգենդների հետ միասին ընթերցող և ունկընդորդ հասարակայնության մեջ լայն ժողովրդայնություն էին վայելում պարականոնները, կամ այսպես կոչված ապոկրիֆները: Պաշտոնական եկեղեցու կողմից «մերժված, արգելված, անվավեր» հայտարարված այդ ստեղծագործությունների «սիրալիր» ընդունելությունը բացատրվում է նրանով, որ բոգոմիրները նրանց մեջ ներարկեցին իրենց աշխարհիկ ըմբռնումներն ու հակաֆեոդալական տրամադրությունները:

Հայաստանում դեռ շատ վաղ ժամանակներից նույնպես տարածված էր այդ ժանրի գրականությունը: «Ապոկրիֆները միջին դարերում գրկաբաց են ընդունվել աղանդավորական միջավայրում, սիրվել են որպես իրենց ուսմունքին մոտեցող գաղափարախոսություն: Վստահությամբ կարելի է ասել, որ ապոկրիֆներն ընդունելություն են գտել նաև հայ աղանդավորական շրջաններում՝ պավլիկյանների, թոնդրակեցիների և մյուսների մոտ»³⁵:

Այդ ավանդություններից զրավոր մեզ շատ քիչ բան է հասել, քանզի, ինչպես ասել է Մ. Աբեղյանը «Շատ բան, հարկավ դեռ կենդանի զարգացման մեջ է եղել բերանացի քարոզով և ավանդությամբ»: Այնուամենայնիվ, ալիք առ ալիք Բալկաններ գաղթեցված տասնյակ հազարավոր աղանդավորները, որպես հայ ժողովրդի միս ու արյունից մի շատված, բնական է, իրենց հետ Բուլղարիա են տարել նաև հայկական հավատալիքներ, լեգենդներ ու պարականոններ:

«...Այս աղանդը, — գրում է հոգվածագիր Լ. Թ.-ն, ակնարկելով Բուլղարիայում հաստատված պավլիկյաններին, — ծնունդ տվավ տեղական գրականության մը, պարիկի պատմություններու և հեքիաթներու, ասոնցմե մի քանին տեղական էին, բայց մեծամասնությունը հույն, հայկական կամ արևելյան»³⁶:

Մի շարք ավանդություններ սերտորեն կապված են Ֆիլիպպուպուլսի շրջակայքում գտնվող Պետրիցիոնի (այժմ Բաչկովոյի — Վ. ձ.) հինավուրց վանքի հետ: Քաղբեղոնական այս հաստատությունը, որը հիմնադրվել է 11-րդ

35 Կ. Մելիք-Օհանջանյան, էջեր հայ միջնադարյան գեղարվեստական արձակից, Երեան, 1957, էջ 20:

36 «Փարոս», Պլովդիվ (Բուլղարիա), 24 հուլիսի 1941 թ.: Բուլղար բանասեր Յու. Յավորսկին 1928 թ. պատահաբար հայտնաբերում է հին բուլղարերենով առասպելական պատմական մի փոքրիկ հատված, որի մեջ «անախրոնիկ» կերպով պատմվում է Բուլղարիայում պավլիկյան աղանդի սկզբնավորման ու տարածման մասին: Երիտասարդ պատմաբան Հր. Բարթիկյանը գտնում է, որ այդ լեգենդը հայկական է, որ այն Բուլղարիա է անցել 9-րդ դարում այնտեղ գաղթող հայ աղանդավորների հետ: Տես Հայկական ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», Երևան, 1957, № 1, էջ 83:

դարում, ազգությամբ հայ, բայց «վրացականացած» զորական և խոշոր կալվածատեր Գրիգոր Բակուրյանի նախածնունդով, կոչված էր Ֆիլիպպուսի շրջակայքում կենտրոնացված հայ և բուլղար աղանդավորների մեջ ուղղափառ եկեղեցու պրոպագանդան մղելու համար: Այս մեծ վանքի բացառապես հայ և վրացի հոգևորականները զբաղվել են նաև թարգմանական աշխատանքներով: Հայ ժողովրդի այս կամ այն հատվածի երկարատև շփումը Բուլղարիայի բնակչության հետ, իր արտացոլումն է գտել ոչ միայն հայկական, այլև վրացական, հունական և բուլղարական լեզբներում ու հավատալիքներում³⁷:

Շատ հավանական է, որ այդպիսի «գրականությունը» հետագայում միախառնվելով միջնադարյան Բուլղարիայում շրջանառության մեջ գտնվող նույնատիպ զրույցների, լեզբներում ու ապոկրիֆների հետ, հետզհետե իրենց մեջ ընդունել են նոր տարրեր, փոփոխակվել ու վերամշակվել են, և ի վերջո տեղայնացել: Այսօր շահագանց դժվար է պարզել այդպիսի գրական կամ բանավոր հուշարձանների ազգային պատկանելիությունը:

Անցյալում երկու ժողովուրդների մտածողության ու սոցիալական ձրգտումների ընդհանրության մասին է խոսում նաև այն իրողությունը, որ թե՛ Հայաստանում և թե՛ Բուլղարիայում նույնպիսի սիրով ու հետաքրքրությամբ են կարդացվել ու լսվել կրոնական կամ աշխարհիկ բովանդակությամբ միևնույն երկերը, մեծ մասամբ հունարենից թարգմանված, ինչպես «Պատմություն սբանչելյաց տղայության Քրիստոսի» և «Հիշատակ վարուց սբբույն Գրիգորի Հոռոմա պապի» պարականոնները, Հովհաննես Ոսկեբերանի մասին բազմաթիվ զրույցները, «Ֆիդիոլոգը», Եզոպոսի առակները, «Պատմություն վարուց Ալեքսանդրին» զրույցի տարրեր փոփոխակները և այլն:

Միջնադարյան պոեզիայի զարգացման պատմության մեջ բացառիկ տեղ են գրավում ժողովրդական երգերը, հերոսական էպոսը: Եթե Հայաստանում 8—10-րդ դարերում արաբական խալիֆների դեմ հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարից ծնվեց «Սասունցի Դավիթ» հերոսապատումը, ապա 14-րդ դարի վերջերից, երբ Բուլղարիան ընկավ օսմանյան հորդանների կրնկի տակ, բուլղար ժողովրդի մահուկենաց գոյամարտը իր գեղարվեստական մարմնացումը գտավ լեզբնդար Կրալի Մարկոյի շուրջը ստեղծված էպիկական երգերում ու ավանդություններում: Մարկոյի հերոսական կերպարում բուլղար ժողովուրդը ներդրել է ազատ ու մարդավայել կյանքով ապրելու իր դարավոր երազանքը: Մարկոյի տիտանական ուժի, նրա անհուն մարդասիրության ու ազատասիրության մասին հիանալի երգեր են հյուսել նաև Բալկաններում ապրող սլավոնական մյուս ժողովուրդները:

«Կրալի Մարկո» էպոսի մասին ջերմ խոսքեր է ասել հայ ժողովրդի մեծ բանաստեղծ Հովհ. Թումանյանը: Նա Մարկոյին համարել է «սլավոն ժողովուրդների Սասունցի Դավիթը», վեր է հանել այդ էպոսի համասլավոնական բնույթը, և բարձր գնահատել հատկապես այն, որ մինչև այսօր էլ նրա մեջ կենդանի է մնացել ժողովրդական բանահյուսությունը³⁸: Թումանյանը մեծ սիրով այդ էպոսից թարգմանել է առանձին պատումներ:

³⁷ Н. Марр, Аркаун, монгольское название христиан... Петербург, 1905, с. 26, Միջ. Բարթիկյան, Հայ աղանդավորների հետքերը հյուսիսային Հունաստանում, Հայկական ՍՍԻ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1956, № 3, էջ 75:

³⁸ Զ. Թումանյան, Երկերի ժողովածու, հատոր 4, Երևան, 1951, էջ 364:

Թուրքական բռնակալության ամբողջ ժամանակաշրջանում սոսկալի աղետն ու զրկանքը շեն հեռացել երկու բախտակից ժողովուրդների հայրենական շեմքից: Օսմանցու արյունալի յաթաղանը դամոկլյան սրի նման անընդհատ կախված է եղել ստրկացած ժողովուրդների գլխին: Եթե 17-րդ դարում Հայաստանում արյուն ու ավեր էին տարածում Շահ Աբբասի հրոսակները, այդ նույն ժամանակ Բուլղարիայում իրենց անասելի գազանություններով ահ ու սարսափ էին սփռում արյունկզակ ենիշլերիններն ու կիրջալինները: Պատմության այս դաժան օրերին, Բուլղարիայի տարբեր վայրերում ապրում էին դեռևս բավական մեծ թվով հայեր: 17-րդ դարի հայ ճանապարհորդ Սիմեոն Լեհացին իր ուղեգրություններում գրում է. «Եւ թէ հաշուես ի Պուղտանա մինչև Ստամբուլ, պոթուն Ուռումելին մինչև մեծն Վանատիկ, նա չկա քաղաք, դեղ կամ շֆտրլիկ, որ հայ չկենա...»³⁹: Նույնն է վկայում նաև 19-րդ դարի սկզբների հայտնի ճանապարհորդ Մինաս Բժշկյանցը: Հայ ժողովրդի այս հատվածը բուլղարների հետ միասին դարեր շարունակ բաժանել է ազատազուրկ կյանքի բոլոր դառնությունները:

Մեր միջնադարյան երգիծական պոեզիայի անվանի ներկայացուցիչ Մարտիրոս Ղրիմեցին Ղրիմի առաջնորդությունը վարելիս 1673 թվականին ուղևորվում է Երուսաղեմ: Ծանապարհին կանգ է առնում նաև Բուլղարիայի հայաշատ քաղաքներում: Իր շրջագայությունների անմիջական տպավորությունների տակ Ղրիմեցին գրում է մի շարք աշխույժ ստանավորներ, ուր ծաղրի է ենթարկում հայ հոգևորականության տգիտությունն ու ընչաքաղցությունը, ինչպես նաև հատու շտրիխներով ուրվագծում է թալանի ու կողոպուտի հետևանքով «չեղի» վերածված բուլղարական քաղաքների ճշմարտացի պատկերը:

Ահա թե ինչ օրի է հասել Սևծովյան երբեմնի գեղեցկուհի, բայց այժմ «յամենայն բարիքից ցամաքած» Ահեղու քաղաքը.

«Բայց դու դայս ծանիր, տիրացու Նիկոյ,
Անուն քաղաքիդ որ կոչի Ահեոյ.
Հաց ու կեր շունի, միայն ջուրն է պօլ,
Վերջն տի մնա խարապա և շեոլ»⁴⁰:

«Սոֆիացի տէր Յունանին» պամֆլետում հայ քահանայի ծուլության ու թմրածության հետ միասին պատկերված է անապատ դարձած Սոֆիայի ողբալի վիճակը: Սուլթան Մահմեդ 4-րդի իշխանության օրերին, երբ թուրքերը պատրաստվում էին արշավելու Լեհաստանի վրա, Սոֆիան վերածվել էր ռազմական ճամբարի: Հենց այդ օրերին էլ Ղրիմեցին ականատես է լինում քաղաքում տիրող ահ ու դողին:

«Ազդամբ շարին պատահեցայ
Ի շեոլ քաղաքն Սոֆիա:
Եկաք ճանապարհէ դադրած,
Հեծեծանօք անձամբ ցաւած.

³⁹ Սիմեոն դարի Լեհացույ ուղեգրութիւն, «Հանդէս Ամսօրյա», Վիեննա, 1932, էջ 469:

⁴⁰ Ա. Ա. Մարտիրոսյան, Մարտիրոս Ղրիմեցի, Երևան, 1958, էջ 110:

Մեք և գրաստք սեր խիստ սոված,
 Զի էր անթիւ գօրք հեծելաց:
 Գնացաք ի ժամն, դուռ ոչ էր րաց,
 Յահէ գօրացն ամրափակած...»⁴¹:

Մարտիրոս Ղրիմեցու այս և մի քանի այլ բանաստեղծությունները («Ի վերայ Պուրղազու», «Տէր Սիմէօն երիցուն», «Սիլիսարեցի Յակոբ երիցուն» և այլն), որոնք նվիրված են բուլղարահայերի կենցաղի ու սովորությունների պատկերմանը, որոշակի հետաքրքրություն են ներկայացնում նաև բուլղար պատմաբանների ու բանասերների համար:

Բուլղարիայում հայ գաղութները իրենց գոյությունը պահպանել են նաև հետագա դարերում: Դրա պերճախոս վկաներն են՝ մինչև այսօր երկրի տարբեր վայրերում հայտնաբերվող հայկական հին արձանագրությունները, տապանաքարերը, ձեռագրերը, կենցաղային ու եկեղեցական իրերը, որոնց մասին բազմաթիվ ուսումնասիրություններ են լույս տեսել հայ և բուլղար պարբերական մամուլում: Բուլղարահայերի տնտեսական ու հոգևոր կուլտուրայի մասին հետաքրքիր հիշատակություններ կան նաև բուլղար պատմագրության մեջ (Յ. Իվանով, Պ. Դիմիտրով, Վ. Զլատարսկի և ուրիշներ):

Երկու ժողովուրդների այս դարավոր համակցության ու մտերմության արդյունքը պետք է համարել այն, որ մինչև անցյալ դարի կեսերը մի շարք հայաշատ բնակավայրերում (Արմենիցա, Արմենովո, էրմենլու, Պավլիկենի և այլն), ինչպես նաև «Սվիշտով և Պլովդիվ քաղաքների շրջակայքում ապրող բուլղարների ու հայերի կենցաղային սովորությունների, ասեղնագործության, երաժշտության, ժողովրդական պարերի մեջ կան շատ նմանություններ»⁴²:

Ղրիմի պատերազմից հետո՝ լուսավորական շարժումների և ազգային-ազատագրական պայքարի շրջանում, իմաստավորված պատմության դարավոր փորձով, երկու բախտակից ժողովուրդները էլ ավելի սերտ կապերով ամրապնդեցին իրենց բարեկամությունը: «Նրանք եղբայրացան ազատության միևնույն գաղափարով, ոգեշնչվեցին միևնույն գաղափարով և հավատացին այդ գաղափարի հաղթանակին», գրել է մի առիթով բուլղար գրող Ն. Ատանասովը⁴³:

Հերոսական դրվագներով, պատմական, գրական և կուլտուրական փոխ-հարաբերություններով հարուստ այս ժամանակաշրջանը արժանի է ավելի խորը և բազմակողմանի ուսումնասիրության:

41 Նույն տեղում, էջ 89:

42 Ստ. Մելիք-Քալշյան, Հայաստանը 7—9-րդ դարերում, Երևան, 1958, էջ 58:

43 «Правда», Сливен (България), 1942, № 1015.